ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

օգոստոսի 2025 թվականի №-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 4-Ի №319Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» օրենքի 30-րդ հոդվածը, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասը, 33-րդ և 34-րդ հոդվածները, «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ մասը, Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2013 թվականի նոյեմբերի 1-ի №374Ն որոշմամբ հաստատված՝ էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզավորման կարգը և հաշվի առնելով «Վի-Ար-Բի Կոնցեռն» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 2025 թվականի հուլիսի 30-ի գրությունը՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2013 թվականի սեպտեմբերի 4-ի «Վի-Ար-Բի Կոնցեռն» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը «Ձորագետ-6» փոքր հիդրոէլեկտրակայանում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության լիցենզիա տրամադրելու մասին» №319Ա որոշման 2-րդ կետով հաստատված՝ էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության №0512 լիցենզիայի պայմանների 9-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«9. Կայանի փաստացի տեղակայված (դրվածքային) հզորությունը 2290 կՎտ է, իսկ էլեկտրական էներգիայի արտադրության գործունեությունն իրականացվում է բացառապես հետևյալ ագրեգատներով (սարքավորումներով).

1) հիդրոտուրբին №1՝ ՇԱ55-Հ-45, 930 կՎտ, 2013թ.,
2) գեներատոր №1՝ AG725.400.50.S12, 865 կՎտ, 2013թ.,

3) Հիդրոտուրբին №2՝ XJA-W-63/1X16.3, 675 կՎտ, 2024թ.,
4) Գեներատոր №2՝ SFW400-12/990, 625 կՎտ, 2024թ.,
5) հիդրոտուրբին №3՝ HLA550-WJ-60P, 440-1330 կՎտ, 2018թ.,
6) գեներատոր №3՝ SFW800-8/1180, 800 կՎտ, 2018թ.:»:

2. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում կարող է բողոքարկվել Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան, և դրա բողոքարկումը չի կասեցնում որոշման գործողությունը կամ կատարումը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում «Վի-Ար-Բի Կոնցեռն» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **Մ. ՄԵՍՐՈՊՅԱՆ**

ք. Երևան
-- օգոստոսի 2024թ.